

ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԱՐՔԱ ԱՐԹՈՒՐԻ ԼԵԳԵՆՂՈՒՄ*

Լիլիթ Այվազյան

Երևանի պետական համալսարան

Լեգենդներն ու էպիկական պատմությունները մեզ անցյալի հետ կապող լավագույն միջոցն են, քանզի դրանք բացահայտում են մեր նախնիների իդեալները: Այդպիսին է նաև Արքա Արթուրի լեգենդը: Արթուրին կարելի է ընկալել որպես պատմական և որպես գեղարվեստական կերպար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, Արթուրի կերպարը բնութագրող գծերը՝ պատմական տեքստերից մինչև միջնադարյան էպիկական ստեղծագործություններ, որոշակի փոփոխությունների են ենթարկվում, և սրա պատճառը ֆրանսիացի հեղինակներն են, որոնք միջնադարում գրի են առել լեգենդը:

Հոդվածը նպատակադրված է ներկայացնելու Արքա Արթուրի լեգենդի՝ հետազոտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք գծեր՝ մասնավորապես ուշադրություն սևեռելով անգլիական ընկալման մեջ դեռ այսօր էլ ոգևորություն առաջացնող արթուրյան լեգենդի կարևորագույն խորհրդանիշները:

Բանալի բառեր. Արքա Արթուրի լեգենդը, խորհրդանիշներ, Կամելոտը, արթուրյան կլոր սեղանը, Էկսկալիբուրը:

Ներածություն

Արթուրյան դարաշրջան, Կելտական մթնշաղ, Անգլիայի ծնունդ. սրանք մի շարք ազդեցիկ ռոմանտիկական անվանումներ են, որոնք պատկանում են Բրիտանական պատմության ամենից խառնաշփոթ, բայց միևնույն ժամանակ կարևորագույն ժամանակաշրջաններից մեկին:

Արքա Արթուրը որպես պատմական և գեղարվեստական կերպար

Համաձայն 12-րդ դարի անգլիացի հեղինակ Ջեֆրի Մոնմուտացու¹ (Geoffrey of Monmouth) արտասովոր գեղեցիկ և ինչ-որ չափով մտացածին երկի (*Historia Regum Britannia* – «Բրիտանական արքաների պատմություն»)՝ Արքա Արթուրը լեգենդար բրիտանացի առաջնորդ է, որն ապրել է 5-6-րդ դդ.: Միջնադարյան պատմագրությունների և ասքերի վկայությամբ՝ Արքա Արթուրը 6-րդ դարի սկզբում ինքնապաշտպանական մարտեր է մղել ընդդեմ Սաքսոնական զավթիչների:

Դեռևս միջնադարում Արթուրի լեգենդը մեծ համբավ էր վայելում: Չնայած այն բրիտանացի արքայի մասին էր, այդուհանդերձ, 15-րդ դարում արդեն ամբողջովին գրառվել է ֆրանսերենով: Հենց ֆրանսիացի հեղինակներն են լեգենդում ավելացրել արթուրյան լեգենդի կենտրոնական կերպարները և կարևորագույն տարրերը, այդ թվում՝ սիր Լանսելոտի կերպարը և սուրբ գավաթը:

15-րդ դարի վերջում, անգլիացի սիր Թոմաս Մելորին, ամբողջացնելով լեգենդի պատմումները, Արթուրին վերադարձնում է Անգլիային և անգլիացիներին

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.12.2016:

(Armstrong 2009): Սա շատ հեզմանական քայլ էր, քանի որ Արթուրի կերպարն իր նախնական հավանական ընկալմամբ կելտական էր և համբավ էր ձեռք բերել՝ պայքարելով անգլիացիների անգլո-սաքսոն նախնիների դեմ:

Սիր Թոմաս Մելորիի արթուրյան տարբերակում է, որ առաջին անգամ հանդիպում ենք Պենտեկոստալ երդմանը (Pentecostal Oath), որը չի նշվում Մելորիի օգտագործած և ոչ մի աղբյուրում: Գիտնականների կարծիքով այս երդումն արժեքային վարքականոն էր, որով պետք է առաջնորդվեին ասպետները: Արքա Արթուրն իր ասպետներին հրամայում էր՝ *«երբեք չբռնանայ և չսպանել, պետական դավաճանությունից հեռու մնալ, թողություն տալ նրանց, ովքեր այն հայցում են՝ հիշելով, որ հակառակ դեպքում հավերժ կզրկվեն արքա Արթուրին ենթակա ասպետի տիտղոսից: Արթուրը խրախուսում էր նրանց՝ միշտ օգնել տիկնանց, օրհորդներին և այրիներին, երբևէ բռնաբարության փորձ չկատարել՝ այլապես մահապատժի կենթարկվեն: Բացի սրանից՝ նա կարգադրել էր, որ իր ռազմիկներից ոչ մեկը անհիմն վեճերի պատճառով մենամարտ չսկսի՝ հանուն սիրո կամ աշխարհիկ բարիքների»* (Armstrong 2009:110-111):

Արքա Արթուրը, ըստ մի շարք ժամանակագրությունների, տվել է տասներեք ճակատամարտ, որոնք պատմականորեն տեղի են ունեցել 100-200 տարվա կտրվածքով (Nicolle 2010:7): Բազմաթիվ գիտնականներ պնդում են, որ Արթուրը չէր կարողանա տասներեք ճակատամարտ առաջնորդած լինել, քանի որ տասներեքը շատ մեծ թիվ է մեկ մարդու կյանքի համար, և այս ճակատամարտերը տեղի են ունեցել իրարից շատ հեռու ընկած տարածքներում: Սակայն, մեր կարծիքով, այս պնդումը թույլ է և չհիմնավորված: Մարդկության պատմությունը դիտարկելով՝ անդրադառնանք Ալեքսանդր Մակեդոնացուն, որի առաջնորդությամբ տեղի է ունեցել տասը խոշոր ճակատամարտ և բազմաթիվ փոքր ընդհարումներ: Ընդ որում՝ այս ճակատամարտերը տեղի են ունեցել ինչպես արևմուտքում՝ Հունաստանից մինչև Եգիպտոս, այնպես էլ արևելքում՝ մինչև Հնդկաստան ընկած տարածաշրջաններում: Ղեռ ավելին՝ այս իրադարձությունները մ.թ.ա. 4-րդ դարում էին: Եթե քննարկելու լինենք Նապոլեոն Բոնապարտի օրինակը, ապա պարզ կդառնա, որ նա անձամբ առաջնորդել է իր զորքերը հիսունինը ճակատամարտերում՝ սփռված Եվրոպայի ողջ տարածքով, որոնցից հիսունում հաղթանակ է տարել: Այսպիսով՝ Արքա Արթուրի մղած ճակատամարտերի տասներեք թիվը կարող է հավանական լինել, այլ ոչ թե միֆական:

Ինչ վերաբերում է նրա գեղարվեստական կերպարին, ապա այն յուրօրինակ է և մշտափոփոխ: Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ Արքա Արթուրը հանդես է գալիս նոր կերպարով, ու, թերևս, այդ է պատճառը, որ չկա մի հստակ գիծ, որով կարելի է ներկայացնել նրա կերպարը:

Պատմագրություններում առկա Արթուրը պատմության գերիշխող կերպարն է, զորեղ է և կենտրոնական դեր է կատարում: Նա է առաջնորդում ճակատամարտերը և կատարում սխրագործություններ՝ պատիվ ու համբավ բերելով իր արքունիքին: Սակայն ռոմանտիկական ասքերում Արթուրը հաճախ մնում է ստվերում, գործում է միայն ետնաբեմում և հանդես գալիս որպես ոգեշնչման աղբյուր իր ասպետների կատարած հերոսությունների համար:

Արթուրյան խորհրդանիշները

Այս ամենի կողքին, արթուրյան լեգենդը լի է հիշատակման և ուսումնասիրության արժանի խորհրդանիշներով, որոնցից ամենակարևորներն են կլոր սեղանը, Էկսկալիբուրը², Մերլինի կերպարը, սուրբ գավաթը (The Knights of the Round Table):

Այս խորհրդանիշները լեգենդի հիմքն են և ևս մեկ անգամ հաստատում են, որ այս լեգենդը մեծ դեր է կատարել Բրիտանական ժողովրդի և մշակույթի զարգացման մեջ և որոշակի նշանակություն ձեռք բերել նույնիսկ ժամանակակից կյանքում:

Խորհրդանիշներից է կլոր սեղանը (Symbolism of King Arthur's Round Table), որը նոր ընկալմամբ տարածված է գիտական և քաղաքական շրջանակներում: Այս հասկացությունը ծնունդ է առել արթուրյան լեգենդում: Արքա Արթուրն իրեն ենթակա ասպետներին և ազնվականներին նստեցնում էր կլոր սեղանի շուրջ: Հետաքրքրականն այն է, որ միջնադարյան սեղանները սովորաբար ուղղանկյուն էին լինում, հազվադեպ դեպքերում՝ քառակուսի, բայց գրեթե երբեք՝ կլոր: Արքունիքում թագավորը, թագուհին և մի շարք ազնվականներ նստում էին այսպես կոչված «բարձր սեղանի» շուրջ, իսկ մյուս բոլոր հյուրերը՝ մեկ կամ ավելի ուղղանկյուն սեղանների շուրջ: Որքան բարձր էր տիտղոսը, այնքան ավելի մոտ էին նստում բարձր սեղանին: Կլոր սեղանը, ի հակառակ ֆեոդալական հիերարխիայի այս օրենքներին, կարծես հավասարություն էր մտցնում Արթուրի ասպետների միջև (The Knights of the Round Table):

Լեգենդի կարևոր խորհրդանիշներից է նաև Արթուրի ամրոցը՝ Կամելոտը: Կամելոտը «Ասպետական ոսկե դարի» խորհրդանիշն է: Հենց այստեղ էին Արթուրն ու իր ասպետները նստում կլոր սեղանի շուրջ և ղեկավարում երկիրը: Կամելոտը բացակայում էր արթուրյան լեգենդի նախնական պատմումներում և առաջին անգամ 12-րդ դարում մուտք գործեց լեգենդ՝ Ֆրանսիացի հեղինակների շնորհիվ: Գիտնականների մեծ մասի կարծիքով Կամելոտն ամբողջովին մտացածին է, և այն հնարավոր չէ գտնել քարտեզի վրա: Սակայն մի շարք գիտնականներ չեն դադարում փնտրել արթուրյան աշխարհի մայրաքաղաք Կամելոտը: Գիտնական Նորիս Լեսիի համոզմամբ՝ Կամելոտը չի գտնվում որևէ կոնկրետ տեղում, այն կարող է լինել ամենուր (Lacy 1991:66-67): Կամելոտում կան բազմաթիվ արքաների և ասպետների դամբարաններ, Կամելոտում է Արթուրը պսակադրվում Գվինեվերայի հետ, այստեղ են տեղի ունենում արթուրյան լեգենդի վճռորոշ իրադարձությունները: Կամելոտն ավերվում է, երբ Արթուրը պարտություն է կրում իր տասներեքերորդ՝ Կամլանի ձակատամարտում: Այսուհանդերձ, գիտնականները բուռն բանավեճեր են մղում Կամելոտի տեղադրության հարցի շուրջ՝ դրանով իսկ Կամելոտին ժամանակակյան-առասպելական բնույթ վերագրելով, և այն դարձնելով Արթուրի արքունիքի ու աշխարհի ազդեցիկ խորհրդանիշներից մեկը:

Քննարկենք ևս մեկ խորհրդանիշ՝ զուգահեռ տանելով հայկական ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծռերի» հետ: Արթուրյան լեգենդը պնդում է, որ Արթուրը ձեռք էր բերել միֆական մի թուր՝ Էկսկալիբուրը, որն էլ ստացել էր լճի տիրուհուց: Նույն կերպ հայկական էպոսի մեջ Սասնասարը՝ Սասունի հիմնադիրը, մտնելով ծովը (հայկական պատմագրություններում և ասքերում շատ հաճախակի լճերը նշվում են որպես ծով) ձեռք է բերում մի զարմանահրաշ թուր՝ Թուր Կեծակին, որն իր հատկանիշներով շատ նման է Էկսկալիբուրին: Երկու թերթն էլ կարող են իրենց ձեռքում բռնել միայն իրական և արժանավոր արքաները (առաջնորդները),

երկու թերերն էլ պետք է վեր բարձրանան միայն ընդեն թշնամու և հանուն բարիքների գործելու: Թե՛ Արթուրը, թե՛ Սանասարը, այս թերերի օգնությամբ բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ ի վերջո անցնում են իշխանության գլուխ:

Արթուրյան առասպելի հետաքրքրական կողմերից է նաև այն գաղափարը, որ Արթուրը մի օր պետք է ետ վերադառնա լույս աշխարհ փրկչի (մեսիա) տեսքով, որպեսզի փրկի իր ժողովրդին: Արթուրի հարության գաղափարը առաջին անգամ նշում է 12-րդ դարի հեղինակ Ուիլիամ Մալմեսբուրացին. «*Բայց Արթուրի գերեզմանը ոչ ոք չի տեսել, այնպես որ հնագույն միջերը պնդում են, որ նա դեռ պետք է վերադառնա*» (Padel 1994:10): Հետագայում Արթուրի վերադարձի մասին հիշատակություն ենք գտնում Ջեֆրի Մոնմուտացու ստեղծագործության մեջ: Նա գրում է, որ Արթուրը մահացու վիրավորվել էր Կամլանի ճակատամարտում, և նրան տեղափոխել էին Ավալոն կղզի, որտեղ նա պետք է բուժվեր և ապա՝ վերադառնար (Geoffrey of Monmouth 1973): Այս դրվագը նույնպես հնարավորություն է ընձեռում համեմատություն անցկացնելու հայկական էպոսի հետ. Ագաթանգեղոսը (Միերի դուռ) փակված Փոքր Միերը երդվում է դուրս չգալ այնտեղից մինչև աշխարհին ամբողջովին չվերափոխվի:

Սրանք պարզապես մի քանի օրինակներ են, որոնք ցույց են տալիս, որ չնայած այս պատմությունները ստեղծվել են հազարավոր կիլոմետրերով իրարից հեռու երկրներում, այդուհանդերձ ունեն էպոսներին բնորոշ տիպաբանական ընդհանրություններ:

Ցանկացած ժողովրդի համար միջերը, լեգենդներն ու էպոսները անգնահատելի են, քանզի դրանցում արտացոլված են տվյալ ժողովրդի պատմությունը, անցյալի հավատալիքները, կենսակերպն ու իդեալները:

Արթուր Պենդրագոնի՝ մասին «Հավիտյանս հավիտենից արքայի» լեգենդը գրական ստեղծագործության մի անգնահատելի նմուշ է: Արթուրը հայտնվում է տասնյակ ստեղծագործություններում, որոնցից յուրաքանչյուրում տարբեր ներկայանալով հանդերձ՝ չի փոխում իր հատկանիշներից մեկը այդ պատմություններից և ոչ մեկում: Նա նույնպես մահկանացու է և իր թուլություններն ու թերություններն ունի: Արթուրի կերպարը, որպես իդեալ, տարածվում է բազմաթիվ երկրներում, և լեգենդի պատմական հիմքերը թերևս կորցնում են իրենց կարևորությունը: Արթուրն առաջնորդ է, հերոս, ազատության ու ազնվության մարտիկ, նրա կերպարն ապրում է մինչ օրս ու շարունակում ոգեշնչել մարդկանց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջեֆրի Մոնմուտացին (110-1155 թթ.) հոգևորական էր և մեծ ներդրում ուներ բրիտանական պատմագրության և արթուրյան լեգենդի զարգացման մեջ:
2. *Էկսկալիբուր* թրի անվանումը ծագում է հին ֆրանսերեն *Excalibur*-ից, որն էլ իր հերթին առաջ է եկել Ջեֆրի Մոնմուտացու երկերում նշվող *Caliburn* անունից: Համաձայն մի վարկածի՝ այն ծագում է հին վելսերեն *Caledfwlch* անունից, որ նշանակում է *ճակատամարտ, պինդ*: Սիր Թոմաս Մելորիի տարբերակում *Էկսկալիբուրը* գործածվում է *պողպատ կտորող* իմաստով:
3. Պենդրագոն (*Pendragon* կամ *Pen Ddraig*) – հին վելսերենում նշանակում է *գլխավոր վիշապ կամ առաջնորդ վիշապ*: Այս անունը Արթուրին անցել էր իր

հորից՝ Ութերից, որն իրեն կոչում էր Պենդրագոն, քանի որ ոգեշնչվել էր վիշապակերպ գիսաստղից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Armstrong, D. (2009) *Sir Thomas Malory's Morte Darthur*. Anderson, South Carolina: Parlor Press.
2. Geoffrey of Monmouth (1973) *Historia Regum Britanniae Book 11. 2*, Cardiff: University of Wales Press.
3. Nicolle, D. (2010) *Arthur and the Anglo-Saxon Wars*. Oxford: Osprey.
4. Norris, J.L. (1991) *Camelot. // The New Arthurian Encyclopedia. / Ed. by J.L. Norris*. New York: Garland.
5. Padel, O. J. (1994) *The Nature of Arthur. // Cambrian Medieval Celtic Studies 27*. Cambridge: Department of Welsh.
6. *Symbolism of King Arthur's Round Table*. Available at: <<http://www.log24.com/log07/saved/070216-oundTable.html>> [Accessed March 2016].
7. The Knights of the Round Table. Available at: <<http://www.arthurian-legend.com/more-about/more-about-arthur-3.php>> [Accessed March 2016].

Symbols in the Legend of King Arthur

Myths and legends, epic tales are a means to connect with the past. They reveal the ideals of our ancestors. Such is the Legend of King Arthur. It is hard to find somebody who has never heard of King Arthur. Yet even though Arthur was most likely a Celtic warrior who came to fame fighting the Anglo-Saxons, ironically enough he has become a unique symbol of Great Britain.

There are two aspects to Arthur's character, historical and fictional. Interestingly enough Arthur's characteristics and the traits of his personality change from historical texts to medieval epic tales. This was mainly caused by the French authors who documented the legend in the Middle Ages. It should also be mentioned, that some of the most famous and beloved characters namely Lancelot and Guinevere were added to the legend by the French.

The only trait of Arthur's image that does not change throughout various texts, is his humanity. Arthur, just like any other human being, is not flawless. Yet he is a hero who fights for justice, a hero who inspires people up to modern days.

Символы в легенде о короле Артуре

Легенды и эпические предания являются связующим звеном между нами и нашим прошлым; они рассказывают нам о том, каковы были идеалы наших предков. Одна из таких легенд повествует о короле Артуре. Артура можно воспринимать и как историческое лицо, и как художественный персонаж. Как показали исследования, черты, характеризующие Артура, подвергаются изменениям из текста в текст – от исторических материалов к

средневековым эпическим источникам. Следы этого явления ведут к французским авторам, которые в средние века записывали легенду.

Целью данной статьи является выявление ряда черт артуровских легенд, представляющих исследовательский интерес. Особое внимание уделено важнейшим символам, и по сей день с воодушевлением воспринимаемым англичанами.